ՕՍՄԱՆՅԱՆ ԴՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ (1870—1890-ական թթ.)

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

1860—1870-ական թթ. արևմտահայ հասարակական մտքի զարգացման հետևանքով մամուլն ու հրապարակախոսությունը ընդլայնեցին իրենց ազգային-հասարակական բովանդակությունը։ Ազգային համախմբման գաղափարախոսությունը, որ խթանվում էր լուսավորական-դեմոկրատական շարժումը, գաղութներում հրատարակվող մամուլը կողմնորոշում էր դեպի Արևմտյան Հայաստան, որի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքը դառնում են մամուլի լուսաբանումների հիմնական առարկան, պայմանավորում նրա հասարակական արժեքը։ Ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը այս շրջանում կանգնում է հաստատուն գետնի վրա և կենսական մղումներ ստանում բռնակալության տակ հեծող ժողովրդական զանգվածների տրամադրություններից։

Արևմտահայ մամուլի զարգացումը մի հայտնի չափով համընկավ մամուլի օսմանյան դրաքննության ձևավորման ու հաստատման ընթացքին։ Այդ դրաքննությունը իրականացրել է օսմանյան բռնակալության սոցիալ-քաղաքական պատվերը, այն է՝ սրբագործել կայսրության հաստատունության գաղափարը, կասեցնել հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի գաղափարախոսության զարգացումը, ինչպես և թուրքական լիբերալ-սահմանադրական շարժումը։ Անկախ իր դրսևորումների ձևից, գրաքննությունը հանդես էր գալիս իբրև սուլթանական ռեժիմը համակողմանիորեն հիմնավորող, դրա դեմ ամեն մի օպոզիցիա կանխող ու կանխարգելող ինստիտուտ։ Պրուսական դրաքննությունը, գրում էր Կ. Մարքսը, «մեղանից պահանջում է օրենքներին համապատասխան վարքագիծ, պահանջում է հարգանք՝ օրենքների նկատմամբ և դրա հետ միասին մենք պարտավոր ենք հարգել այնպիսի հաստատությունները, որոնք մեզ օրենքից դուրս են դնում և կամայականությունը բարձրացնում իրավունքի աստիճանի»[1]։ Բռնակալության իրավունքները նույն կերպ սրբագործել է օսմանյան գրաքննությունը։ Թանզիմաթի առաջին շրջանում եվրոպական օրենսդրական նորամտությունները յուրացրած թուրքական քաղաքագետները գրաքննությանը տվեցին ձևականորեն լիբերալ բնույթ՝ ստեղծելով մամուլի ազատության երևութականություն։ 1864 թ. դեկտեմբերի 31-ի «Մամուլի մասին» օրենքով նախնական գրաքննություն չէր սահմանվում, սակայն և ոչ մի բանով չէին երաշխավորվում մամուլի և լրագրողների իրավունքները[2]։ Ոստիկանական բռնությունները սկսվում էին տպագրությունից հետո. անցանկալի ելույթները հետապնդվում էին ամենայն խստությամբ՝ կանխելով հետագա հնարավոր հետևանքները։ 1880-ական թթ. սկզբին միայն համիդյան գրաքննությունը մի կողմ նետեց ձևական ազատամտությունը և վերածվեց վարագ կանխարգելող հա.ֆակարգի, որ ընդհանրապես անօրինակ էր գրաքննությունների պատմության մեջ։

Կայսրության մեջ մամուլի հետապնդումները առավել խիստ դարձան այսպես կոչված «Ալիի որոշումից» հետո (1867 թ. փետրվար), երբ «նոր օս-

---

[1] К. Маркс. Заметки о новейшей прусской цензурной инструкции.— К. Маркс, Ф. Энгельс. Соч., т. I, с. 17.

[2] А. Д. Желтяков. Печать в общественно-политической и культурной жизни Турции. М., 1972, с. 93.

մաններին» հրատարակությունները կառավարությանը քննադատեցին Կրետեի դեպքերի կապակցությամբ[3]։ Թեև որոշման մեջ նշվում էր, որ այդ «վարչական ձեռնարկն ունի բացառապես ժամանակավոր բնույթ», սակայն այն փաստորեն գործել է մինչև Աբդուլ Համիդի բռնապետության վախճանը՝ իրավական հիմք ծառայելով մամուլը օրենքից դուրս հայտարարելու համար։ Նշված որոշումից հետո գրաքննությունը սկսել է ճնշել մասնավորապես այն հայ պարբերականները, որոնք ակտիվորեն էին արձագանքում հասարակական ու ազգային իրադարձություններին։ Պատժիչ միջոցառումները գործադրվեցին 1868 թ. վերջին, Ազգային ժողովի և պատրիարքի անգործունակության պայմաններում։ Անտերունչ մնացած ազգային գործերին միջամտեց ժողովուրդը, որ Կ. Պոլսի Գումգափուի և Խասգյուղի եկեղեցիներում ցույցեր արեց պատրիարք Պ. Թագթագյանի դեմ[4]։ Վերջինիս և նրա կողմնակիցների բողոքների հիման վրա ձերբակալվեցին «Մանզումեի էֆքյարի», «Փունջի» և «Ժամանակի» խմբագիրները՝ ժողովրդին հրահրելու ամբաստանությամբ[5]։ 1869 թ. հունվարին խափանվեց «Մանզումեի էֆքյարը» երկու ամիս ժամկետով. Սավֆեթ փաշան դեմոկրատական այդ թերթին մեղադրում էր գրգռիչ հոդվածներ տպագրելու մեջ[6]։ Տպագրական տեսչության հաջորդ հարվածը հասավ «Միածանին»։ Թերթը 1869 թ. փետրվարին մի քանի թղթակցություն էր տպագրել արևմտահայերի հարստահարությունների մասին, ընդ որում, ազգային-կրոնական հարստահարությունները նրա էջերում դիտվում էին տնտեսական բռնությունների հետ սերտ փոխկապակցության մեջ։ «Մանզումեի էֆքյարի» և «Միածանի» հրապարակումներով արևմտահայ հրապարակախոսության մեջ առավել ընդլայնվում էին տնտեսական ու ազգային ճնշումներից ուժասպառ հայ գավառի դրության բացահայտման չափերը։ Տպագրական տեսչությունը իսկույն խափանեց «Միածանը»[7], սակայն, քանի որ խնդրին խառնվել էին Կ. Պոլսի եվրոպական հրատարակությունները (համանման նյութեր տպագրելով հայ գավառի վիճակի մասին), «Մասիսում» պաշտոնական ազդ զետեղեց գավառների կացության վերաբերյալ։ Առաջին և միակ անգամ էր, որ տպագրական տեսչությունը պարզաբանումներ էր տալիս մամուլի հրապարակումների վերաբերյալ։ Ազդում նկատելի է ընդհարումների նախաձեռնությունը հայ բնակչության վրա բարդելու կամ «վրանաբնակ քրդերին» մեղադրելու մտայնությունը, մինչդեռ, ջանախնդրաբար շրջանցվում են թուրք աղաների և շահնաների բռնությունների փաստերը, որոնցով լի էին վերոհիշյալ հրապարակումները[8]։ Հետագայում, որպես կանոն, տպագրական տեսչությունը ոգի ի բրին ճգնել է հերքել հայ մամուլի այս կարգի մերկացումները և դրանք համարել «խռովություն սերմանելու» փորձեր։

1870-ական թթ. սկզբից նկատվում է արևմտահայ մամուլի հասարակական տեսադաշտի զգալի ընդլայնում։ Թերթերը հաճախ դուրս էին գալիս զուտ ազգային շրջանակներից և քննադատում Թուրքիայի վարչական քայքայված վիճակը, պաշտոնեության կամայականությունները ու բռնությունները Արևմտյան Հայաստանում։ Հայ բնակչության հարստահարումների համադրմամբ այսպիսի քննադատությունը դառնում էր նպատակասլաց և ձեռք էր բերում հասարակականորեն ներգործուն ուժ։ Վարչական բարենորոգումների կապակցությամբ օսմանյան պաշտոնեությանը խիստ քննադատության ենթարկեց «Մանզումեի էֆքյարը»։ «Խնդիրք առ նորին վսեմություն մեծ վեզիրն» հոդվածում Կ. Փանոսյանը բացահայտում էր ավազակաբարո պաշտոնեության

---

[3] G. Young. Corps de droit Ottoman. Vol. 2, Oxford, 1901, p. 321.

[4] Ալ. Երիցյան. Տաճկաստանի հայոց իրավունքները և նոցա սահմանադրությունը.— «Փորձ», 1877, № 4, էջ 289։

[5] «Մասիս», 1 մարտի 1869։

[6] «Մանզումեի էֆքյար», 24 մարտի 1869։

[7] «Միածան», 16—18 փետրվարի 1869։ «Մամուլ», 1869, № 2, էջ 14։

[8] «Մասիս», 31 մայիսի 1869։

կոյմիդ Սեբաստիայի հայերի կրած տառապանքները, իսկ դրան հետևած մի հոդվածում՝ պաշտոնական վերնախավի (վյուքելաններ) բարոյական այլասերումն ու անբանությունը[9]։ Թերթը խափանվեց երկու ամսով՝ «ծայրահեղորեն անպատշաճ լեզու գործածելու» պատճառով։ Դրեթե միաժամանակ, տպագրական տեսչությունը մեկ ամսով դադարեցրեց «Օրագիրը»՝ կառավարության ներքին քաղաքականությունը քննադատելու համար[10]։ Խափանված թերթերի հանդարտակ պաշտպանությամբ հանդես եկավ «Մամուլը», որը «Տպագրական ազատություն» հոդվածում դատապարտեց վարչական բռնացումները մամուլի վրա։ Կացությունից դուրս գալու ելքը «Մամուլը» տեսնում էր միայն կայուն և կիրառվող օրենքների մեջ, որին կարելի էր հասնել սահմանադրական ձևի կառավարմամբ։ Լիբերալիզմի դեմ մարտնչող Բ. գուռը երեք ամսով պատժեց «Մամուլի» ազատամտությունը[11]։

Հարկ է նշել, որ արևմտահայ հրապարակախոսները Թուրքիայում սահմանադրության հաստատման հարցը արծարծել են Արևմտյան Հայաստանի վարչական ու տնտեսական բարենորոգումների տեսանկյունից։ Օսմանյան կառավարման համակարգի լիբերալացման ձգտումը այս իմաստով չէր առնչվում ո՛չ «նոր օսմանների» և ո՛չ էլ Կ. Պոլսի Եվրոպական հրատարակությունների հայեցության հետ, այլ իր հիմքում ուներ ազգային, տնտեսական ու հասարակական վիճակի բարվոքման գաղափարը։ Գրաքննությունը ըմբռնել է արևմտահայ մամուլի այս միտումները և դրանց դեմ հալածանք սկսել այն ժամանակ, երբ Կ. Պոլսի թուրքական ու եվրոպական հրատարակություններին թույլ էր տալիս քննարկել երկրում սահմանադրություն կիրառելու խնդիրը։ «Մասիսը» այս առթիվ նկատում էր, թե «նույնիսկ Կ. Պոլիս այն բանը, որ տեղվույս Եվրոպական լրագիրք կգրեն ու կհրատարակեն, փորձով կտեսնեմք, որ բնիկ լրագրաց ներելի չէ...»[12]։

Արևմտահայ գավառի հարստահարությունների թեման մամուլում ավելի հստակ դրսևորվեց 1872 թ. ապրիլից, երբ պատրիարք Մ. Խրիմյանը Բ. գուռ էր ներկայացրել հարստահարությունների վերաբերյալ տեղեկագիրը։ Մամուլը սատարում էր պատրիարքի բռնած դիրքը և իր հրապարակումների հավասարությունն ընդգծելու նպատակով գրեթե միշտ վկայակոչում էր պատրիարքական ընթացիկ թագրիրները։ Օրինական տեսակետից գրաքննությունը մամուլին չէր կարող մեղադրել մտացածին լուրեր հաղորդելու մեջ, ուստի այս պայմաններում տպագրական տեսչությանը ոչինչ չէր մնում անելու, քան վարչական սանձարձակության դիմելը։ 1872 թ. նոյեմբերին «Մանզումեի էֆքյարում» տպագրվեցին Բաբերդի հայ բնակչության նկատմամբ գայմագամի գործադրած բռնությունների փաստերը[13]։ Թերթը խափանվեց մեկ ամսով։ Դրան հետևեց «Օրագրի» եռամսյա դադարը՝ իշխանություններին քննադատելու պատճառով[14]։ Տպագրական տեսչության նոր տնօրեն Մաճիտ բեյը մամուլի սանձը ձգելու համոզված կողմնակից էր և լիբերալ թողտվությունների հակառակորդ։ Մեկ ամսում՝ 1872 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Կ. Պոլսում խափանվեց հինգ թերթ։ Միդհատին փոխարինած մեծ վեզիր Մեհմետ Ռյուշտյու փաշան շտապում էր իստությունների ալիքով մոռացնել տալ իր նախորդի ներողամիտ վերաբերմունքը մամուլի հանդեպ։ Բողոքելով դրա դեմ, Կ. Պոլսի Եվրոպական թերթերը գրում էին, թե մամուլի դեմ ուղղված հալածանքը գրգռում է հասարակության հետաքրքրությունը, որի պատճառով սպատժված թերթերը դառնում են հանրահայտ։ Մինչդեռ, եզրակացնում էին նրանք, ուշադրություն չդարձնելու դեպքում դատապարտելի նյութը չէր նկատվի։ Դիտողությունը նոր չէր. Հե-

9 «Մանզումեի էֆքյար», 15—16 մարտի 1872։

10 «Մասիս», 23 մարտի 1872։

11 «Մամուլ», 25 մարտի 1872։

12 «Մասիս», 23 մարտի 1872։

13 Նույն տեղում, 11 նոյեմբերի։

14 Նույն տեղում, 28 նոյեմբերի, 1872։

գելը իր ժամանակին նկատում էր, թե «Ֆրանսիայում խոսքի ազատությունը միշտ էլ պակաս վտանգավոր է եղել, քան լռությունը»[15]։

Օսմանյան գրաքննությունը գերագասում էր բռնի ուժը։ 1870-ական թթ. առաջին կեսին և գրանից հետո էլ տպագրական տեսչությունը անընդհատ խափանումներով ձգտում էր սառեցնել հայ մամուլի հասարակական ակտիվությունը։ Երկարաժամկետ դադարներով պատժվում էին շնչին մեղանչումները։ 1873 թ. հունվարին երկու ամսով խափանվեց «Մամուլը», չորս ամսով «Հայրենիքը»՝ Բերայի հայկական գերեզմանատունը կառավարության կողմից սեփականելու առթիվ քննադատական դիտողությունների համար։ Որպես կանոն, խափանման վճիռ ընդունելիս տպագրական տեսչությունը գործի ոչ մի քննության չէր դիմում և հիմք էր ընդունում միայն ամբաստանությունը։ Հ. Պարոնյանը «Մեղվի» 1873 թ. № 120-ում տպագրեց մի ծաղրանկար, որով խարսանվում էին պատրիարք Խրիմյանի հակառակորդների մեքենայությունները։ Տպագրական տեսչությունը, սակայն, ծաղրանկարը մեկնաբանեց հակառակ իմաստով, այսինքն՝ «Մեղուն», իբր, ծաղրել է պատրիարքին և մեղանչել բարոյականության դեմ։ Պարբերականը խափանվեց վարչական կարգով, երկու ամիս ժամկետով։ «Հանուն արդարության և ճշմարտության,— գրում էր Հ. Պարոնյանը,— այս անիրավության դեմ բողոքելե զատ ուրիշ բան չենք կրնար ընել, որովհետև մեր դատավորը մարտ 12-ն է (նկատի ունի 1867 թ. մարտի «ժամանակավոր որոշումը»—Ա. Խ.), որ առանց մտիկ ընելու կհրամայեր»[16]։

1878 թ. սկզբից սկսած հայ մամուլի նկատմամբ օսմանյան գրաքննության ցուցաբերած վերաբերմունքի մեջ նկատվում է նոր գիծ՝ անհանդուրժողություն հատկապես հայ համայնքին վերաբերող լուսաբանումների հանդեպ, որ ուղեկցվում էր ամբողջ երկրում մամուլի դեմ ուղղված հարձակումներով։ Ջախջախվեցին «Նոր օսմանների» հրատարակությունները. խափանվեցին «Հադիքան» և «Դիյոժենը», մարտի վերջին ձերբակալվեցին և աքսորվեցին օսմանյան լիբերալ լրագրողները՝ Նամրք Քեմալը, Մուհիր բեյը, Ահմեդ Միդհատը և ուրիշներ[17]։ Ընկճելով մամուլի ակտիվությունը, կառավարությունը ծրագրում էր ստեղծել մամուլի նոր օրենք, որը մի կողմից պետք է քողարկեր վարչական կամայականությունները և մյուս կողմից՝ օրինական տեսք տար մամուլի խիստ վերահսկողությանը։ 1873 թ. ստեղծվեց մամուլի օրինագիծ կազմող հանձնաժողով՝ Արիֆի բեյի նախագահությամբ, որի անդամների մեջ էր մտնում նաև Գ. Օտյանը[18]։ Մամուլը հակասական լուրեր էր տպագրում օրինագծի ադատամիտ կամ անհանդուրժող բնույթի վերաբերյալ։ Համենայն դեպս, դեկտեմբերին ավարտված օրինագիծը չհաստատվեց[19]։ Կառավարությունը վարչական բռնացումները գերադասել էր իրավական որևէ կարգավորումից։ Մամուլի օրենքի փոխարեն խմբագիր-հրատարակիչներին կառավարությունը հրամցրեց դրոշմի տուրք՝ երկու փարա (տարեկան 50—60 լիրա) յուրաքանչյուր պարբերականի համար։ Տուրքը ղգալի նյութական ծանրություն էր, որ խորին դժգոհություն առաջացրեց լրագրողների մեջ։ Կ. Պոլսի եվրոպական հրատարակությունների խնդրանքով արված դեսպանների միջամտությունը կարողացավ միայն հետաձգել դրա գործադրումը։ Տուրքը սկսել է գանձվել 1875 թ. մարտից[20]։ Խմբագիրների նյութական դժվարությունները չթեթևացան թերթերի գների մեջ արված փոփոխություններից։ Պարբերական-

---

15 Гегель. Философия права. М.—Л., 1934, т. VII, с. 338.

16 «Մեղու», 1872, № 121-ի հավելվածը։

17 M. Serif. The genesis of Young Ottoman thought. Princeton, 1962, p. 28, 65; R. H. Davison. Reform in the Ottoman Empire 1856—1876. Princeton-New Jersev 1963, p. 297, 299.

18 «Մասիս», 3 փետրվարի 1873։

19 Նույն տեղում, 15 դեկտեմբերի 1873։

20 Նույն տեղում, 13 մարտի, 25 ապրիլի 1875։

ների մի զգալի մասը ստիպված էր դադարեցնել հրատարակությունը։ 1875—1878 թթ.՝ երեք տարվա ընթացքում դադարել են երկու տասնյակի չափ հայերեն և հայատառ թուրքերեն պարբերականներ։ Արևմտահայ մամուլի պատմության այս աննախընթաց երևույթի մեջ իր ավերիչ հետևանքն է թողել նաև գրոշմի տուրքը։ Դարավերջին և 1900-ական թթ. սկզբներին Թուրքիայում գրոշմի տուրք էին վճարում միայն հայ պարբերականները, իսկ մյուս լեզուներով հրատարակվող թերթերն ու հանդեսները ազատվել էին դրանից[21]։ Աբդուլ Համիդը արևմտահայերի հանդեպ վարած իր ջարդարարական քաղաքականությունը տարածում էր նաև նրանց մամուլի վրա։

1870-ական թթ. գրաքննական կորագծի բարձրացումը կամ իջեցումը անգրադարձնում էր Թուրքիայի քաղաքական կյանքում կատարվող տեղաշարժերը։ 1875—1876 թթ. լայն ծավալ ստացավ բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը սուլթանական բռնակալության դեմ։ Ազատագրական պայքարի վերելք էին ապրում նաև կայսրության մյուս հպատակ ժողովուրդները, այդ թվում և արևմտահայերը։ Քաղաքական ու տնտեսական կրախ ապրող կայսրության գրության քննությունը համառորեն ներթափանցում էր հայ հասարակական հոսանքների գաղափարաբանության մեջ, մամուլի էջերը։ Հայ մամուլը համակրական նյութեր է տպագրել Հերցեգովինայի և Բոսնիայի մարտնչող ապստամբների մասին, հաճախ զուգահեռներ անցկացրել հարստահարվող սլավոնների և արևմտահայերի միջև։ Բուլգարիայից ստացված թղթակցությունները, այս առթիվ նկատում էր «Մասիսը», «Հայաստանի գավառներին եկած նամակներուն գրեթե ընդհանրությունն են հարստահարության մասին»[22]։

Տպագրական տեսչությունը այս շրջանում փորձում էր փակել Բալկաններից եկող անցանկալի տեղեկատվության հոսքը։ 1875 թ. աշնանը հրապարակվեցին ծանուցումներ, որոնցով արգելվում էին ռազմական իրադարձությունների մասին ոչ պաշտոնական հաղորդումները[23]։ Հրապարակվեց մամուլի օրենքի լրացուցիչ հավելված՝ նույն բովանդակությամբ[24]։ Հերցեգովինայի և Չեռնոգորիայի դեպքերի մասին լուրեր տպագրած «Օրագիրը» և «Լրագիրը» խափանվեցին։ «Անպատեհ» և «անբարոյական» լուրեր տարածելու մեղադրանքով, իսկ իրականում թուրքական իշխանությունների քննադատության համար դադարեցվեցին «Միմոս» և «Մամուլ» երգիծաթերթերը[25]։ 1875 թ. նոյեմբերին մեկ ամսով խափանվեց Հ. Պարոնյանի «Թատրոնը»՝ Մուշի հարբստահարությունների առթիվ կառավարությանը կտրուկ քննադատելու պատճառով։ Գրաքննության դայրույթն առանձնապես բորբոքել էր նամակը սև եզրագծերի մեջ հրատարակելը, որով խորհրդանշվում էր ժողովրդի աղետալի վիճակը՝ ի հակադրություն նրա ապահովության վերաբերյալ պաշտոնական հավաստիացումների[26]։

Լռության դատապարտելով կայսրության թունավոր պալարները բացահայտող հրատարակությունները, գրաքննությունը 1875 թ. վերջին և 1876 թ. սկզբին մեղմացրեց մամուլի դեմ իր ադմկալի հալածանքները։ Աբդուլ Ազիզը հրապարակել էր ֆիրման և իրադե, որով կրկնվում էին հպատակների իրավահավասարության ու ապահովության, ինչպես և բարենորոգումների մասին նախորդ հաթթերի հավաստիացումները։ Դրա նպատակն էր մի կողմից հանդարտեցնել ապստամբության հարաճուն թափը Բալկաններում և մյուս կողմից՝ հակադրել տերությունների քաղաքական միջամտությանը կայսրության ներքին գործերին։ Համենայն դեպս, վարչական բարենորոգումների խոս-

21 «Նոր կյանք», 1900, № 20, էջ 311—312։

22 «Մասիս», 5 նոյեմբերի 1875։

23 Նույն տեղում, 4 սեպտեմբերի, 15 նոյեմբերի 1875։

24 S. R. Iskit. Matbuat rejimleri. Ankara, 1938, s. 697.

25 «Մասիս», 1, 4 հունվարի 1876։

26 Գ. Խ. Սանփանյան. Հակոբ Պարոնյան. Երևան, 1964, էջ 84։

տումը խթանեց մամուլում գավառական կյանքի մասին հրապարակումների հոսքը։ Այսուհանդերձ, գրաքննության պատժիչ մեքենան գործում էր. 1876 թ. փետրվարին խափանվեցին Ա. Ճեվահիրճյանի «Լուսինը» և Ն. Թյուլպենտճյանի «Լրագիրը»[27]։ Այս ժամանակահատվածում գրաքննությունը արևմտահայ մամուլը հսկողության է ենթարկել կղերական մարմինների միջոցով, որ որոշ չափով թուլացրել էր գավառական հրապարակումների հետապնդումները։ Դա բացատրվում էր օսմանյան Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական իրավիճակով։ Դանուբյան վիլայեթներում տերությունների առաջարկած ինքնավարության ծրագրին Բ. դուռը շարունակում էր հակադրել ընդհանուր բարենորոգումների անիրական, բայց և սուլթանական ռեժիմի համար խիստ շահավետ գաղափարը։ Արևմտյան Հայաստանի վարչական ու տնտեսական քայքայված վիճակի ցուցադրումները, այս մտայնության համաձայն, պետք է ծառայեին Բ. դռան այն դիրքորոշմանը, ըստ որի՝ բարենորոգման կարիք են զգում ոչ միայն Դանուբյան վիլայեթները, այլև կայսրության բոլոր տիրույթները։ Դրանով էլ պետք է ապացուցվեր ոչ թե մասնակի, այլ ընդհանուր բարենորոգումների անհրաժեշտությունը։

1876 թ. գարնանը տպագրական տեսչությունը «կրոնական ազատության արդար օրենքի» վկայակոչումով մամուլին արգելեց հակակրոնական բնույթի նյութեր տպագրել։ Կ. Պոլսի կրոնական ժողովը չհապաղեց օգտվելու իրեն ընձեռած այդ հնարավորությունից։ Խ. Նար-Պեյի, Ա. Գալֆայանի և այլոց ջանքերով երեք ամսով խափանվեց «Թատրոնը» և վեց ամսով՝ «Արևելյան մամուլը» (խափանված է մնացել երեք ամիս)[28]։

Գրաքննական խստությունները վերսկսվեցին այն ժամանակ, երբ Մահմուդ Նեդիմ փաշան Թուրքիայի բարդացող քաղաքական իրադրության պայմաններում (ապրիլյան ապստամբությունը Բուլղարիայում, Սերբիայի մոտալուտ պատերազմի մեջ մտնելը, մահմեդական մոլեռանդության պոռթկումը Սալոնիկում, երբ ամբոխը սպանեց ֆրանսիական ու գերմանական հյուպատոսներին) սկսեց խիստ միջոցներ գործադրել պաշտոնական ուղեգծից շեղվող հրատարակությունների դեմ։ Մամուլին խստիվ արգելվեց մեկնաբանություններ տպագրել «ներկա պարագաներուն և Բ. դռան քաղաքականության վրա»[29]։ Մայիսի 11-ին մեծ վեզիրը մտցրեց ժամանակավոր նախնական գրաքննություն[30]։ Այն. սակայն, չհասցրեց գործողության մեջ մտնել։ Դրան հետևած սոֆթաների (մեդրեսեների ուսանողներ) ցույցը սուլթանին հարկադրեց պաշտոնանկ անել մեծ վեզիրին և շեյխ-ուլ իսլամին[31]։ Նոր մեծ վեզիրը վերացրեց նախնական գրաքննությունը։ Մայիսի 15-ին կամովին դադարած թերթերը սկսեցին վերահրատարակվել։ Քաղաքական կյանքի մակերես ելան «նոր օսմանները», որոնց անվճռական գործողությունները թուրքական պահպանողականության դեմ, այլև մի հայտնի չափով դաշնակցելը նրա հետ՝ խանգարեցին մամուլի իրավական դրության որևէ բարելավմանը։ Օտարերկրյա քաղաքական սպառնալիքին թուրքական լիբերալ քաղաքագետները հակադրեցին «միասնական հայրենիքի» շովինիստական դոկտրինան։ Այս իրավիճակում Բ. դռան և ազգային հետադիմության թելադրանքով պատրիարքը հրապարակեց իր հայտնի շրջաբերականը, որտեղ անտեսում էր հայ գավառի օրհասական դրությունը և բարեհպատակային զեղումներ ուղղում պետությանը[32]։ Շրջաբերականը վճռական քննադատության արժանացավ «Թատրոնում», որի պատճառով այն խափանվեց մեկ ամսով[33]։

---

27 «Լուսինը» խափանվել է ընդմիշտ՝ ըստ երևույթին սկզբից իսկ անբարեհույս լինելով գրաքննության աչքում («Մասիս», 10 փետրվարի 1876)։

28 «Թատրոն», 9 մայիսի 1876։ «Արևելյան մամուլ», 1876, № 3, էջ 199։

29 «Մասիս», 9 մայիսի 1876։

30 S. R. Iskit. Matbuat rejimleri, s. 618.

31 Midhat Ali Haidar. The life of Midhat pasha. London, 1903, p 81.

32 «Մշակ», 2 սեպտեմբերի 1876։

33 Դ. Խ. Ստեփանյան. Հակոբ Պարոնյան, էջ 90—91։

Օսմանյան պահպանողականությունը շարունակում էր մամուլը ճնշելու իր ուղեգիծը Աբդուլ Ադիզին գահընկեց անելուց հետո ևս։ Հետադիմականները հետաձգեցին սահմանադրության նախագծի քննարկումը[34], ապա մամուլին պարտադրեցին չքննարկել սահմանադրության և բարենորոգումների հարցերը՝ առանց տպագրական տեսչության թույլտվության[35]։ Օգոստոսին կառավարությունը դադարեցրեց պարբերականների հրատարակության թույլտվությունը՝ վկայակոչելով երկրի խառնակ իրավիճակը[36]։ Դրան հետևեց թերթերի խափանումների նոր ալիքը։ «Անորոշ ժամանակով» խափանվեց «Նորագիրը»՝ իր խմբագիր Օ. Խոճասարյանի խմբագրական պոռթկուն խառնվածքի պատճառով, ինչպես և մի քանի հունական և թուրքական թերթեր։ Գրաքննական խստությունները առանձնապես սուր դարձան այն բանից հետո, երբ «նոր օսմանները» անգլիական դեսպանի «զգույշ խրախուսանքով» Մուրադին հեռացրին գահից և նրան փոխարինեցին Աբդուլ Համիդով[37]։ Անհավասարակշիռ Մուրադի փոխարեն լիբերալները ստացան արտաքուստ բարեմիտ, բայց գիշատչի կրքերը խնամքով թաքցրած մի տիրակալ, որի բռնակալական հակումների առաջին զոհերից մեկը պետք է դառնար մամուլը։ 1876 թ. օգոստոսի 30-ին «Մասիսի» հավելված «Օրաթերթը» տպագրեց «Անատոլուի հայերի վիճակը» հոդվածը, որտեղ մերկացվում էին թուրքական ռեդիֆի և տեղական իշխանությունների սանձարձակ բռնությունները Յոզգատի հայ բնակչության հանդեպ[38]։ Երկու շարաթ անց օրաթերթը խափանվեց «օսմանյան աղատամիտ և հայրական վարչության» դեմ զրպարտություններ հրատարակելու, ինչպես և հայերին «անարդար և բռնավոր կառավարության մը լուծին ներքև ճնշյալ ներկայացնելու մեղադրանքով»[39]։ Եթե մինչ այդ հայ մամուլի մեղանչումները ձևակերպվում էին իբրև «ծայրահեղություններ», հասարակական կարծիքը զրգռող նյութեր և այլն, ապա օրաթերթի դատավճիռը ցույց էր տալիս, որ նոր սուլթանի օրով դրանք դիտվում են իբրև քաղաքական հանցանք։ Դա նշանակում էր շրջադարձային կետ՝ հայ մամուլի հանդեպ գրաքննության քաղաքականության մեջ, կառավարության քննադատությունը արգելելու բացահայտ նշան։ «Օրաթերթի» պաշտպանության և նրա հրապարակման ճշմարտության հաստատումով հանդես եկած «Մանդումեի էֆքյարին» փրկեց պատրիարքը, որը իր հրապարակային ելույթով հայ թերթերին պաշտպանեց թուրքական մամուլի զրպարտչական հարձակումներից[40]։ Սուլթանը հետաձգեց իր վրեժխնդրությունը, բայց և պարզորոշ հասկացնել տվեց, որ պատրիարքարանի դիվանատունը չի ճանաչում իբրև հայ մամուլի պաշտոնական աղբյուր։ Օ. Խոճասարյանի «Նորագիրը», որ ակնարկ էր տպագրել երեսփոխանական ժողովի նիստերի մասին, անսպասելիորեն խափանվեց[41]։ Գրաքննությունը ցույց տվեց, որ հայ մամուլի նյութերի հավաստիության հարցում այլևս չի ճանաչելու պատրիարքարանի միջնորդությունը։

Ի պատասխան այդ օրերին հայ գավառի հարստահարություններով զբաղվող երեսփոխանական ժողովի նիստերի, թուրքական մամուլը ավելի թունոտ դարձրեց իր հարձակումները արևմտահայերի վրա։ Հայկական թերթերին նրանք մեղադրում էին ապստամբություն բորբոքելու մեջ, իսկ «Բասիրեթը»՝ ժամանակի ամենամասսայական թերթերից մեկը, ուղղակի գրում էր, որ պատրիարքը և ազգային ժողովը օտար քաղաքականության հլու գործիք են և դավ են նյութում պետության դեմ։ 1876 թ. սեպտեմբերին, Աբդուլ Համիդի գա-

---

34 Ю. А. Петросян. Младотурецкое движение. М., 1971, с. 80.

35 «Մասիս», 17 հունիսի 1876.

36 Նույն տեղում, 12 օգոստոսի 1876։

37 M. S. Anderson. The Eastern question. London, 1966, p. 185.

38 «Շարիվարի», 1876, № 35, էջ 273—274։

39 «Մասիս», 16 սեպտեմբերի 1876։

40 Նույն տեղում։

41 «Մշակ», 21 հոկտեմբերի 1876։

հակալությունից քիչ անց, ուրվագծվեց թուրքական մամուլի բնորոշ ուղեգիծը՝ արևմտահայության դեմ ստահոդ զրպարտությունների ու ահաբեկման այն արշավը, որի նպատակն էր ամբողջ ժողովրդին ներկայացնել իբրև քաղաքականապես վտանգավոր և օսմանյան պետությանը թշնամի տարր։ Իր հետագա զարգացման մեջ այդ պրոպագանդը նախորդեց արևմտահայերի 1890-ական թվականների ջարդերին՝ մտքերը նախապատրաստելով դրանց գործնական կիրառման համար։ Յոզդատի հարստահարությունները կոծկելու նպատակով Բ. դուռը հանձնաժողով կազմեց, սակայն այն ցրվեց նույնչափ քմահաճորեն, ինչպես կազմվել էր։ Անգլիացի մի հեղինակ նշում էր, որ Բ. դուռը բանտարկել էր տվել դեպքերի հանցավորներին, բայց և միանգամայն հիմնավոր կասկած էր հայտնում նրանց պատժելու վերաբերյալ[42]։ Որպես կանոն, բանտարկվում էին ոչ թե հարստահարողները, այլ նրանց դեմ բողոքած զոհերը։

«Օրաթերթի» պատիժը, սակայն, չկասեցրեց թուրքական իշխանությունների հարստահարության թեման մամուլում։ Ահաբեկման ու ոստիկանական հալածանքների մի ամբողջ արշավ սանձազերծվեց հայ մամուլի դեմ՝ այսպես կոչված «Շանայի (Տրապիզոն) հարստահարությունների» առթիվ։ Հարվածի տակ ընկան «Հայրենիք», «Արարատ» և «Մեճմուայը հավատիս» թերթերը, որոնք նյութեր էին տպագրել հայ բնակչությանը կեղեքելու և իշխանությունների չարագործությունների մասին։ Երեք թերթերն էլ բացահայտել էին թուրքական պատժիչ ջոկատների դաժանությունները այն հայ գյուղացիների նկատմամբ, որոնք ի վիճակի չէին եղել վճարելու հարկի մնացորդները։

Տպագրական տեսչությունը անմիջապես խափանեց թերթերը և նրանց մեղադրեց չարամիտ զրպարտության մեջ։ Նրանց խմբագիրները՝ Մ. Այվատյանը («Արարատ»), Հ. Մարգարյանը («Մեճմուայը հավատիս») և Մ. Մելիքյանը («Հայրենիք») նախ կանչվեցին տպագրական տեսչության տնօրեն Բլաք բեյի մոտ, որից հետո գործին միջամտեց մեծ վեզիր Ռյուշտյու փաշան։ Ընդունարանում մեծ վեզիրը խմբագիրներին դիմավորեց կոպիտ կշտամբանքներով ու անողորմ ծեծի ենթարկել տվեց նրանց[43]։ Մահացու գանակոծումից հետո Մ. Այվատյանը այդպես էլ չապաքինվեց և վախճանվեց դեկտեմբերի 15-ին[44]։ Մինչ այդ, Շանայի դեպքերի մասին թղթակցությունները հայ մամուլից արտատպել էին Կ. Պոլսի եվրոպական հրատարակությունները և միջադեպը սպառնում էր անախորժ պատմության վերածվելու Բ. դռան դիվանագիտական շփումների համար։ Եվ Բ. դուռը կրկին մտավ «անաչառ հետաքննողի» դերի մեջ։ Կազմվեց հանձնաժողով, որի հետ միասին նոյեմբերի 9-ին Հ. Մարգարյանը և Մ. Մելիքյանը մեկնեցին Տրապիզոն՝ իրադարձությունը տեղում քննելու համար։ Ի վերջո, հաստատվեց դեպքերի ոչ միայն ճիշտ լինելը, այլև բացահայտվեցին էլ ավելի սաստիկ բռնությունների փաստեր։ Կառավարությունը ստիպված էր ազատ թողնել խմբագիրներին[45]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, այնուհետև Հայկական հարցի հրապարակ գալը սուլթանին հարկադրեցին ժամանակավորապես հետաձգել հայ մամուլը վերջնականապես ընկճելու մտադրությունը։ Տպագրական տեսչությունը այս տարիներին ձգտում էր ահաբեկել առանձնապես ակտիվ և հեղինակավոր հայ պարբերականները։ 1877 թ. հունիսին Կ. Փանոսյանը Սերվիչենի օգնությամբ հազիվ փրկվեց ծանր հատուցումից՝ Բայազետից Վան քաշված թուրքական զորքերի վայրագությունները հայ գավառում բացահայտելու պատճառով[46]։ Կ. Փանոսյանը ձերբակալվեց և կանգնեց ռազմական մի-

---

42 W. M Ramsay. Impressions of Turkey. New York, 1897, p. 206.

43 A. Gallenga. Two years of the Eastern Question. London, 1877, p. 340—341.

44 Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ կեսարիո. Կահիրե, 1937, էջ 2039։

45 «Մշակ», 23 դեկտեմբերի 1876։

46 «Մասիս», 18 հուլիսի 1877։ «Շիրակ», 1905, № 5, էջ 358։

նիստրության ատյանի առջև, իսկ «Մանզումեի էֆքյարը» խափանվեց երկու ամսով։

Իր գահակալության առաջին իսկ ամիսներին սուլթանի առաջին գործերից մեկը եղավ երևսփոխանական ժողովում հաստատել տալ խիստ հետադիմական տպագրական օրինագիծ, որով, ի դեպ, արգելվում էր երգիծական թերթերի հրատարակությունը։ Օրինագծի քառասուն հոդվածից քսանը պարունակում էին պատիժներ, իսկ մնացած կեսը ավելի էր սահմանափակում մամուլի ինքնուրույնությունը[47]։ Խորհրդարանը օրինագծում մտցրեց մամուլի վիճակը թեթևացնող ուղղումներ, բայց սուլթանը իր հերթին մերժեց դրանք։ 1878 թ. փետրվարին մամուլի օրինագիծը, ի թիվս այլ օրինագծերի, մնաց օսմանյան վաղածին խորհրդարանի փլատակների տակ։ Մամուլն ընկավ սուլթանի անսահմանափակ իշխանության ներքո։ Մինչ այդ, 1878—1879 թթ. Աբդուլ Համիդը զբաղված էր Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցում տերությունների հետ քաղաքագիտական խաբեություններով, ուստի և հայ մամուլին դեռևս թույլ էր տրվում անդրադառնալ գավառի կացությանը։ Պատրիարքի և ազգային վարչության հանդեպ որդեգրած արտաքուստ զուսպ ընթացքին Բ. դուռը վերջ տվեց 1879 թ. մայիսից։ «Հայաստան» բառը փոխարինվեց «Քրդստանով», մեծ վեզիրը հայերին մեղադրեց «հավատարմության ուղուց շեղվելու» մեջ։ Մշակվեց մամուլը սանձահարելու նոր ուղեգիծ։ 1879 թ. սկզբին խափանվեց «Լրագիրը»՝ Կարինի և Ալաշկերտի հայ բնակչության Ռուսաստան գաղթելու պատրաստության մասին գրելու պատճառով[48]։ Սակայն դրանից հետո թերթերը դեռևս շարունակում էին գավառական թեմաներով հրապարակումները։ Դրանց վերջ տալու համար օգտագործվեց հայատառ թուրքերեն «Թերճեմանը էֆքյարի» և թուրքական «Վաքթի» դատը։ Դատարանում «Վաքթի» փաստաբանը «Թերճեմանը էֆքյարի» խմբագիր Տ. Ճիվելեկյանին և արտոնատեր Ա. Սագայանին զրպարտեց իբրև ապստամբական կազմակերպության հետ կապ ունեցողների։ Հենց դատարանում նրանք երկուսն էլ ձերբակալվեցին՝ դատավորի համար բավական էր եղել ոչ թե մեղադրանքի հիմնավորվածությունը, այլ բուն իսկ մեղադրանքը։ Բանտարկվածներն ազատ արձակվեցին միայն պատրիարքի եռանդուն միջամտությունից հետո[49]։

«Թերճեմանը էֆքյարի» դատավարությամբ գրաքննությունը հայ մամուլին կտրականապես արգելեց շոշափել բարենորոգումների հարցը կամ քննադատել իշխանություններին։ Սուլթանը սկսեց իր համատարած հարձակումը արևմտահայերի ազգային մարմինների, գրականության ու մշակույթի, բարեգործական-կրթական ընկերությունների դեմ՝ ընդսմին հրեշավոր ծայրահեղության հասցնելով գրաքննության հսկողությունը[50]։ Արգելվեցին հայերեն ատենախոսությունները, հատուկ ուշադրություն դարձվեց Հայաստանի պատմական անցյալը մոռացնել տալուն։ Թուրքական «Օսմանլը» և «Հագբգաթ» թերթերը անարգում էին արևմտահայերի ազգային արժանապատվությունը, զրպարտություններ և ստեր տեղում նրանց դավաճանության մասին։ «Օսմանլին» պահանջում էր ոչ թուրքական մամուլի խմբագիրներին աքսորել Թուրքիայից։ «Հագբգաթը» մշակեց լրագրական բարքերին մինչ այդ անծանոթ, նողկալի մի գործելակերպ. թերթն իր խմբագրությունում թխում էր իբր հայերի կողմից ուղարկված՝ թուրքերի և քրդերի դեմ թշնամանքով լեցուն հոդվածներ, ապա տեսական բանավեճ մղում դրանց դեմ՝ ճգնելով թշնամանք հրահրել այդ ժողովուրդների միջև[51]։ Կեղծիքը խրախուսող տպագրական տեսչությունը հայ

---

47 R. Devereux. The first Ottoman Constitutional period. Baltimore, 1963, p. 199—200.

48 «Լրագիր», 12 հունվարի 1879։

49 Նույն տեղում, 10, 15 հունվարի։

50 Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի պատմության էջերից. Երևան, 1982, էջ 187։

51 «Մշակ», 20 սեպտեմբերի 1880։

մամուլին արգելել էր մերկացնել իր ստվերի հետ կռիվ տվող զրպարտիչ թերթին։

«Թերճեմանը էֆքյարի» դատավարությունից հետո պարբերականները դրվեցին կամ իսպառ դադարելու կամ պաշտոնական ուղեգծին լրիվ հնազանդվելու երկընտրանքի առջև։ Ընդմիշտ խափանվեց Բ. դռան տնտեսական քաղաքականությունը դատապարտած «Լրագիրը»[52]։ 1880 թ. սկզբից սուլթանը աստիճանաբար մտցրել է նախնական գրաքննություն, սակայն մինչև 1883 թ. նախնական գրաքննությունը դեռևս համակարգի չէր վերածվել և հայ մամուլը համարձակվում էր «անթույլատրելի» նյութեր տպագրել։ Իսկ այն ժամանակ, երբ բացահայտվեց Կարինի «Պաշտպան հայրենյացի» գործունեությունը, գրաքննությունը դարձավ ծայր աստիճան կասկածամիտ ու հիվանդագին։ 1882 թ. վերջին բոլորովին խափանվեց «Մամուլը», որը տպագրել էր մի հայրենասիրական բանաստեղծություն։ Դա գնահատվեց ոչ ավել, ոչ պակաս, քան «ազգային հեղափոխության մարշ»[53]։ Խմբագիրը մեղադրվեց «Պաշտպան հայրենյացի» հետ կապեր ունենալու մեջ և դատապարտվեց ցմահ աքսորի[54]։ Գ. Այվազյանը ներման արժանացավ 1886 թ.։ Ակներևաբար «Պաշտպան հայրենյացի» դատավարությունից հետո ևս սուլթանը քաղաքական նկատառումներով ձգտել է աննշմար դարձնել այդ կազմակերպության նշանակությունը՝ շարունակելով դատավարությունից առաջ բռնած իր գիծը[55]։ Պատժից չկարողացավ խուսափել նաև «Մասիսը». չօգնեց Կ. Ություճյանի հանրահայտ զգուշությունը։ Թերթը խափանվեց երկու անգամ, երկուական ամսով՝ 1883 թ. մայիս-հուլիսին և հոկտեմբեր-դեկտեմբերին։ Աբդուլ Համիդը ձեռնարկեց մի շարք ահաբեկիչ միջոցառումներ հայ մամուլի դեմ։ 1883 թ. օգոստոսին խափանվեց «Մանզումեի էֆքյարը» գավառական «վնասակար հրատարակությունների» պատճառով։ Նույն ամսին ձերբակալվեց և բանտ նետվեց «Մեճմուայը հավատիսի» խմբագիր Հ. Թոլայանը։ Արևմտահայերի դեմ սուլթանի հալածական քաղաքականությանն ընդդիմանալով՝ այս հրապարակախոսը գրել էր. «Եթե քոլերան աստծո բարկության արդյունքն է, պետք է սպասել, որ Թուրքիո մեջ ևս ծագի, ուր բռնակալությունն ի լրումն հասած է»[56]։

Ինտանելի պայմաններ ստեղծվեցին երգիծական մամուլի համար։ 1883 թվականի հուլիսին Հ. Պարոնյանը պատրաստվում էր դադարեցնել «Ծիծաղի» հրատարակությունը՝ խստություններն ուժեղանալու պատճառով[57]։ Սուլթանի հրամանով բոլոր տպարանատերերը և խմբագիրները պարտավոր էին գրաքննական մարմիններին ներկայացնել երաշխավորողների, որոնք պատասխանատու պետք է լինեին կատարվելիք հնարավոր հանցանքների համար։ «Ամենուն աչքը վախցած է,— գրում էր «Արձագանքի» թղթակիցը,— և ոչ ոք հանձն կառնու երաշխավոր լինել ամեն մի երևակայական հանցանքի համար, զոր կառավարություն կրնա վերագրել մանավանդ հայ լրագրապետին և տրպարանապետին, որք ժամանակ մ'ի վեր մասնավոր հոգածությամբ կնեղվին կառավարության կողմէ»[58]։ Մամուլը լրտեսելը դարձավ սուլթանի կարևոր հոգսերից մեկը։ Գաղտնի ոստիկանության մի ստվար զանգված զբաղված էր միայն օտար և տեղական թերթերում ծածկանունով կամ անստորագիր հանդես եկող հեղինակներին հայտնաբերելու հարցով։ Թերթերին արգելվեց քննադատական դիտողություններ անել անկարգությունների, վարչական թերությունների մասին։ Լրագրական բարքերի մեջ խոր արմատներ նետեցին կեղ-

---

52 «Լրագիր», 27 սեպտեմբերի 1880։

53 «Մշակ», 3 փետրվարի 1883։

54 «Արձագանք», 1883, № 23, էջ 332։

55 Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ. Երևան, 1955, էջ 197։

56 «Մասիս», 20 սեպտեմբերի 1883։

57 «Մշակ», 7 սեպտեմբերի 1883։

58 «Արձագանք», 1883, № 39, էջ 351։

ծիքը, հերյուրանքը և պրովոկացիան։ Հիվանդագին կասկածամտության և մատնությունների մթնոլորտում իր 44-ամյա ուղին ավարտեց արևմտահայ առաջին ազգային պարբերականը՝ «Արշալույս արարատյանը»[59]։

1880-ական թթ. երկրորդ կեսին հայ մամուլը արդեն ենթարկվում էր նախնական ամենախիստ գրաքննության։ Ոստիկանությունն ու գրաքննիչները նույնիսկ պատմական դեպքերի ու անձանց հիշատակության մեջ որոնում էին խռովության ու ապստամբության ակնարկներ և հայ մամուլից ձգտում էին արմատախիլ անել Հայաստանի պատմական անցյալը հիշեցնող ամեն մի հրապարակում։ 1888 թ. գործնական կիրառում էր գտել գրաքննական չհրապարակված մի կանոնադրություն, որ մի որոշ չափով պատկերացում է տալիս համիդյան հրեշավոր գրաքննության մասին։ Մի քանի կետերից կազմված այդ հրահանգներում ցանկալի էին համարվում մամուլի այն նյութերը, որոնք վերաբերում էին «սուլթանի թանկագին կյանքին» և երկրի տնտեսական զարգացմանը. արգելվում էին շարունակելի հոդվածները, բազմակետերը, խնդրագրերը, թագակիր անձանց դեմ արված մահափորձերի, ցույցերի և գործադուլների մասին նյութերը և այլն[60]։ Ֆրանսիացի հեղինակ Պ. Ֆեշը նշում է ևս երկու արգելք՝ «Հայաստան» անվան հիշատակումը և բուն իսկ այս կանոնադրության հրապարակումը[61]։ Ի դեպ, հենց «Հայաստանի» գործածության պատճառով 1889 թ. խափանվեցին ֆրանսերեն «Ստամբուլ» և հունական «Նեոլոգոս» թերթերը, որոնք գրել էին, թե «երկու բարձրաստիճան պաշտոնատար Հայաստան մեկնեցան՝ բնություններ կատարելու և բարեկարգություններ ներմուծելու հրամանով»[62]։ Դրան հետևեց «Արևելքի» խափանումը, որն այդ լուրն արտատպելիս թեև «Հայաստանը» փոխարինել էր «Անատոլուով», բայց չէր կարողացել խուսափել պատժից։ Թերթերի դադարի հրամանի համար բավական էր ամենաչնչին պատճառով իսկ հարուցված բողոքը. այս կերպ 1880—1890-ական թթ. բազմիցս խափանվել են «Մասիսը» և «Հայրենիքը»։ Միայն 1891—1892 թթ. «Հայրենիքը» խափանվել է չորս անգամ՝ վեց ամիս ընդհանուր տեղությամբ, որից հետո, մինչև 1896 թ. հուլիս ամիսը՝ ևս երեք անգամ[63]։

Թուրքական գրաքննությունը 1890-ական թթ. արդեն դարձել էր բազմաշերտ ու ճյուղավորված մի համակարգ, որը փաստորեն բռնակալության անմատնությունն ապահովող ոստիկանական ուռճացած մի հաստատություն էր։ Համանելով ամբողջ երկրի մամուլի դառն ճակատագիրը, հայ մամուլը ենթարկվում էր նաև առանձնահատուկ հսկողության, քանի որ նյութը թուրք գրաքննիչներից առաջ նախ «սանրում» էին հայ պաշտոնյաները. ներքին գործերի մինիստրությունում գործում էր տպագրական տեսչության ենթաբաժին՝ երեք հայ գրաքննիչներով։ Սրանցից մեկն ըստ իր քմահաճույքի վերաձևում էր փորձանմուշները, իսկ մյուս երկուսը թերթը տպագրվելուց հետո իրականացնում էին հետտպագրական ստուգումը և թուրքերեն համառոտում հոդվածները։ Դրանից հետո գործի էին անցնում թուրք գրաքննիչները։ Տեքստը նախ կարդում էր տպագրական տեսչի օգնականը, ապա տեսուչը, սա նյութը հանձնում էր ներքին գործերի խորհրդականին, վերջինս՝ ներքին գործերի մինիստրին։ Երեկոյան թերթը հայտնվում էր «սադրազամի չանթայի» մեջ։ Իր հերթին, թերթը ստուգում էր հանրային կրթության պաշտոնատան գրաքննիչը, որը ներքին գործերի մինիստրություն էր հայտնում իր գիտողությունները։ Գրաքննական հաջորդ աստիճանին կանգնած էին երկու զուգահեռ վերահսկող օղակներ՝ Յլդրիմի գրաքննությունը և ոստիկանությունը։ «Արդ,— եզրափակում է Ա. Արփիարյանը,— Դուռը, հանրային կրթության պաշտոնատունը, Յլդրիմը, ոստիկանատունը իրարմե բոլորովին տեսակետներով կգիտեն ոևէ հոդված կամ լուր։

60 «Մշակ», 26 նոյեմբերի 1888։

61 «Արևելյան մամուլ», 1909, № 30, էջ 716։

62 «Նոր կյանք», 1900, № 15, էջ 236։

63 Նույն տեղում, № 16, էջ 255։

Ին։ որ մեկուն անվնաս կթվի, մյուսին վտանգավոր է»[64]։ Առավել կպչունն ու մանրախնդիրը ոստիկանական գրաքննությունն էր, որը կապեր էր հաստատել հետադիմական ու ապազգայնացած թափթփուկների հետ։ 1898 թ. Տ. Ճիվելեկյանը դժվարությամբ ազատվեց ոստիկանական հետապնդումներից, երբ դիմել էր «Սուրհանդակ» անվամբ թերթ հրատարակելու խնդրանքով։ Ոստիկանության առջև «Սուրհանդակը» ստուգաբանել էին «սուր հա՛ն դակ»՝ «սուրը հանե, թաքմիշ ըրե» (թաքմիշ՝ խրել) իմաստով[65]։ Մեկ տարի անց միայն հաջողվեց ստանալ թերթի հրատարակության արտոնագիրը։ Գրաքննությունը ստեղծել էր ոչ միայն օտար և տեղական գործիչների, մտավորականների արգելված անունների ցուցակներ, այլև տարու դարձվածների և բառերի անվերջանալի ու շարունակ ուռճացող շարքեր։ Դեռևս 1883 թ. «Մանզումեի էֆքյարը» խափանվել էր «սաղթ իրատե» (կեղծ հրամանագիր) դարձվածի համար, քանի որ «իրատեն» նվիրական բառ էր և անթույլատրելի էր դրան «սաղթ» (կեղծ) որակում տալը[66]։ Արգելված էին «հիմար», «հիմարանոց» (հիշեցնում էին Մուրադ V-ի հիվանդությունը), «աստղ», «աստղաբաշխություն» (Համիդի պալատը կոչվում էր Յլդըզ՝ աստղ) և այլ բառեր։ Նույն «Մանզումեի էֆքյարը» 1892 թ. «Լեվընդ հերալդից» անզգուշորեն թարգմանել էր «աստղերը վայր կընկնեն երկնքից» (յլդըզլար դոքյուլեջեքլերի) դարձվածքը, որն առաջացրեց գրաքննական հիդրայի խռովքը. թերթը անհապաղ խափանվեց[67]։ Կտրականապես արգելվում էին արտատպությունները Թուրքիայի սահմաններից դուրս հրատարակվող մամուլից։ Արտասահմանի մամուլը ենթարկվում էր երկշերտ գրաքննության՝ Բ. դռան և պալատի գրաքննիչների կողմից[68]։

Հայ մամուլի գրաքննական ավերածությունները և հալածանքը իրենց գագաթնակետին հասան 1894—1896 թթ.՝ արևմտահայության ջարդերի ու կոտորածների ժամանակաշրջանում։ Ահաբեկման ու սպառնալիքների գործադրմամբ հայ մամուլին արգելվեց գրել 1894 թ. Կարինում, Մուշում, Վանում, Զմշկածագում և այլուր տարածված սովի մասին։ Գավառի այդ աղետալի վիճակի վերաբերյալ կցկտուր լուրեր տպագրած «Ավետաբերը» խափանվեց[69]։ Նույն թվականի հոկտեմբերին դադարեցվեց «Ծաղիկի» հրատարակությունը. շաբաթաթերթի ամբողջ մեղքն այն էր, որ ընթերցողին տեղեկացրել էր Վիեննայի Մխիթարյանների կողմից հայ մամուլի 100-ամյակի առթիվ խմբագիրների ու թերթերի մանրանկար պատկերի տպագրության մասին[70]։

1895 թ. աշնանը Կ. Պոլսում և գավառներում սուլթանի կազմակերպած հայերի կոտորածներից հետո թուրքական իշխանությունները մտադրվեցին հայ մամուլը ծառայեցնել իրենց ստահոդ պրոպագանդին։ Ներքին գործերի մինիստր Նազըմը հայ պարբերականներին պատվիրեց հոդվածներ տպագրել բարենորոգումների մասին և մյուս կողմից՝ կոտորածների ամբողջ մեղքը բարդել իրենց իսկ՝ հայերի վրա։ Խմբագիրները հրաժարվեցին ջարդարարների գործիքը դառնալուց. «Արևելքը», «Հայրենիքը» և «Ճերիտեի շարգիյեն» խուսափողական որոշ նյութեր տպագրեցին, որ առաջացրեց ոստիկանության զայրույթը։ Վերջինս ինքը կազմեց ժողովրդի «ապստամբությունը» վկայող հրապարակումներ և տպագրական տեսչության միջոցով ուղարկեց վերոհիշյալ թերթերին[71]։ Խմբագիրները դիմացան ճնշմանը. պարտադրվող հոդվածը չտպագրելու նպատակով «Հայրենիքի» խմբագիր Հ. Շահնազարը ինքնակամ դադարեցրեց «Հայրենիքի» հրատարակությունը։ Ոստիկանությունը ստիպված

64 Նույն տեղում, № 21, էջ 326։

65 «Մշակ», 27 հոկտեմբերի 1898։

66 «Նոր կյանք», 1901, № 4, էջ 44։

67 «Շիրակ», 1905, էջ 357։

68 E. Pears. Forthy years in Constantinople. New York, 1916, p. 116.

69 «Մշակ», 11 հունիսի 1894։

70 Նույն տեղում, 22 հոկտեմբերի 1894։

71 Նույն տեղում, 18, 25 նոյեմբերի 1895։

էր հրաժարվել իր պրովոկացիոն ծրագրից։ Կարճ ժամանակ անց գրաքննությունը վրեժ լուծեց «Հայրենիքից»։ Թերթը խափանվեց 1895 թ. վերջին՝ Ա. Արփիարյանի վրա մահափորձ կատարելու մասին լուր տպագրելու պատճառով, իսկ 1896 թ. հուլիսի կեսին պարբերականը փակվեց։ Հ. Շահնազարը բանտ նետվեց «խռովություններ հրահրելու» միօրինակ մեղադրանքով[72]։ Նույն թվականի հոկտեմբերին խսպառ խափանվեց նաև «Արևելքը», որն ընդդիմացել էր հայ ազգաբնակչությանը հնազանդության հրավիրող հոդվածներ տպագրելուն[73]։ Թուրքական թերթերը, մինչդեռ, արևմտահայության կոտորածների փաստերը ծածկում էին «գոհացուցիչ վիճակի», «կատարյալ անդորրության և ապահովության» հավաստիացումներով։ Որոշ դեպքերում գավառների «անդորրությունը» նշվում էր իբրև արդյունք այն բանի, որ զորքը ցրել է հայտնված ապստամբներին։ Այս առթիվ է. Պիրսը նկատում է, որ միայն այն փաստից, որ տեղական թերթերը ավադակներին ավելի շատ են հիշում, քան սովորաբար, կարելի էր ենթադրել, որ արտակարգ բան է կատարվել[74]։ Երբեմն կոտորածների մասին կարելի էր կռահել այն հրապարակումներից, որոնց մեջ հայտնվում էր, թե համաճարակները կամ երկրաշարժերը գավառներում վերացվել են «սուլթանի անսահման իմաստության շնորհիվ»[75]։

1890-ական թթ. սկսած սուլթանը կաշառել էր ամբողջ թուրքական մամուլը իր առատ և կանոնավոր նպաստներով։ Այսպես, 1891 թ. «Թերջյումանը հաղրգաթը», «Սաբահը» և «Իկդամը» թ. դոնից ստանում էին ամսական 400 դոլարի չափով նպաստ[76]։ Նպաստները զնալով դարձան սուլթանի և թուրք մամուլի դաղափարական միասնության միակ հիմքը. «Էմանոե-ուլ ումեմը» ստանում էր 240 000, «Սաադեթը»՝ 36 000, «Իսթանբուլը»՝ 24 000 դուրուշ և այլն։ Կաշառք էր տրվում նաև Կ. Պոլսի և արտասահմանի օտարալեզու պարբերականներին[77]։ Բոլոր թերթերի պարտականությունն էր սուլթանի ծննդյան և գահակալության տարեդարձերին ստրկամիտ խմբագրականներ ձոնել նրա իմաստությանը։ Գրաքննիչներն ամենայն մանրախնդրությամբ ստուգում էին բոլոր թերթերի վարքագիծն այդ օրերին։ 1899 թ. սուլթանի քարտուղար Սյուրեյա փաշան նշում էր. «Մոնիթյոր օրիենթալ» թերթից բացի, մյուս բոլոր թերթերը ծննդյան օրը շնորհավորելու պարտականությունը կատարել են հավատարմորեն և հնազանդությամբ»[78]։

1880-ական թթ. մինչև Աբդուլ Համիդի տապալումը թուրքական գրաքննությունը ծանր հարված հասցրեց արևմտահայ հրապարակախոսության զարգացմանը։ Այսուհանդերձ, հրապարակախոսության ֆունկցիան արևմտահայ մամուլում մասամբ անցավ այլ ժանրերի նյութերին՝ դիմանկարային ակնարկին, դրախոսականներին, գեղարվեստական դրականության, իրողություն, որ նկատելի է ամբողջ երկրում հրատարակվող մամուլի համար[79]։ Ազգային և բաղաքացիական գիտակցության բարձրացման գործում լուրջ նշանակություն ունեցավ, մանավանդ, ռեալիստական գրականության զարգացումը, որի գեղարվեստական վերապատկերման հիմնական օբյեկտը դարձան Արևմտյան Հայաստանը և բռնություններով լեցուն նրա սոցիալ-տնտեսական իրականությունը։

---

72 Նույն տեղում, 6, 10 օգոստոսի 1896։

73 Նույն տեղում, 24 հոկտեմբերի 1896։

74 E. Pears. Life of Abdul Hamid. New York, 1973, p. 138.

75 Sadik Shahid bey. Islam, Turkey and Armenia and how they happened. St. Louis, 1898, p. 143.

76 Ahmed Emin. The development of Modern Turkey as measured by its press. New York, 1914, p. 78.

77 N. Bangolu. Basın tarihimizin kara ve ak gunleri. Istanbul, 1960, s. 7—8.

78 Նույն տեղում, էջ 44։

79 Ю. А. Петросян. Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII—начало XX вв.). М., 1985, с. 114.

ОСМАНСКАЯ ЦЕНЗУРА И ЗАПАДНОАРМЯНСКАЯ ПЕЧАТЬ (1870—1890-е гг.)

А. А. ХАРАТЯН

Резюме

В основе отношения османской цензуры к печати лежала политика безопасности султанского режима, а также подавления идеологии освободительной борьбы угнетенных народов империи. Цензура применяла полицейские меры по отношению к армянским периодическим изданиям, вскрывавшим национальное и социально-экономическое угнетение Западной Армении и критиковавшим разложившийся султанский режим. Произвол цензуры достиг беспрецедентных масштабов в 80—90-е годы XIX в., когда по отношению к армянской печати стала применяться та же погромная политика, которая применялась по отношению к самому западноармянскому народу. Была создана многослойная предварительная цензура, которую осуществляли Порта, полиция, министерство внутренних дел и другие органы. Преследования, аресты и высылка армянских редакторов-издателей стали обычным образом действия для цензуры. Цензура эпохи «зулюма» нанесла тяжелый удар по западноармянской публицистике, однако оказалась не в состоянии полностью нейтрализовать общественное воздействие периодической печати.